«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

_____ Մ.Գ.Մանուչարյան
19 սեպտեմբերի 2023թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Սասուն Մյասնիկի Բախշյանի «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.,* Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ստեփան Պապիկյան՝ *տեխնիկ.գիտ.թեկնածու,* Կարեն Ներսիսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Էլեոնորա Մաթևոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ:*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մետալուրգիական արդյունաբերությունը, ՀՀ տնտեսության մակրոտնտեսական մակարդակով ունենալով նշանակալից դեր, ունի լուրջ հիմնախնդիրներ կապված արտադրական ավարտուն շրջափուլի բացակայության հետ, որի արդյունքում երկրում արտադրվում է կիսաարտադրանք և ոչ թե մաքուր մետաղ, ու շարունակականության մեջ նաև մետաղից ստացված արտադրատեսակներ: Սույն հիմնախնդրի լուծման անհրաժեշտությունը հրատապ է, քանի որ երկիրը զրկվում է պոտենցիալ արտադրանքի արտադրությունից, որը կբերեր ՀՆԱ-ի աճին, նոր աշխատատեղերի ստեղծմանը, մուծվող հարկերի աճին, եկամուտների բարձրացմանը և ընդհանրապես բոլոր տնտեսական ցուցանիշների բարելավմանը: Ներկա աշխարհաքաղաքական և տնտեսական մարտահրավերների համատեքստում մեր երկրի տնտեսական հզորացումը ժամանակի հրամայական է, որն էլ կարևորում է մետալուրգիական արդյունաբերության առկա ներուժի ռացիոնալ օգտագործումը և զարգացումը: Սակայն հայտնի է, որ մետալուրգիական արդյունաբերությունը շրջակա միջավայրի վրա

ամենամեծ բացասական ազդեցություն ունեցող ճյուղերից է, ուստի նրա երկարաժամկետ ու արդյունավետ զարգացումը իրատեսական է միայն կայուն զարգացման հայեցակարգի դրույթներով, այսինքն՝ կայուն զարգացման տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչների փոխլրացնող և համալիր զարգացմամբ: Սույն հետազոտության թեման արդիական է և հրատապ, քանի որ ոլորտի հիմնախնդիրների բացահայտումը, դրանց լուծմանը նպաստող համապատասխան տնտեսական քաղաքականության ու մեխանիզմների մշակումը, մետալուրգիական արտադրությունների տնտեսական, էկոլոգիական և սոցիալական համալիր տեսանկյունից հիմնավորված ծրագրերի մշակումը առարկայական կդարձնեն ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացումը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղիների մշակումն ու նախանշումը:

Առաջադրված նպատակն իրագործելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել Հայաստանի մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման առկա հիմնախնդիրները,
- ✓ վերլուծել ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչները,
- ✓ գնահատել ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման նշանակությունը, տեղը, դերը, զարգացման հանքահումքային հենքը,
- ✓ վերլուծել համաշխարհային և հայրենական մետալուրգիական շուկայի կայուն զարգացման ժամանակակից միտումները և կանխատեսումները,
- ✓ հարցը դիտարկելով ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման միկրո և մակրո միջավայրերի մակարդակներով՝ բացահայտել ոլորտի ուժեղ և թույլ կողմերը, առկա հիմնախնդիրները, լուծման արդյունավետ ուղիները,
- ✓ մշակել մետալուրգիական արդյունաբերության ձեռնարկությունների կայուն զարգացումը բնութագրող համալիր ցուցանիշ՝ կայուն զարգացման ինտեգրալ ինդիկատոր,
- ✓ բացահայտել ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնական ուղղություններից մեկի՝ պղնձի արտադրության կազմակերպման էկոլոգիատնտեսական հիմքերը, հիմնական խոչընդոտներն ու խնդիրները և սառաջարկել դրանց լուծման կոնկրետ և միջազգային պրակտիկայում արդարացված լուծումներ,
- ✓ իրականացնել էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով պղնձի արտադրության (մետաղների համալիր կորզմամբ) ծրագրի տնտեսական գնահատում,

հաշվարկել ծրագրի կանխատեսվող մակրոտնտեսական պոտենցիալ ազդեցությունը,

- ✓ մշակել մաքուր մետաղի և դրանից պատրաստվող արտադրատեսակների արտադրության խթանման նպատակով ավելացված արժեքի հարկի փուլային բարելավման ուղի,
- ✓ զարգացման իրական հնարավորություններ ունեցող արտադրությունների ուղղությունները դիտարկել որպես մեծ ավելացված արժեքներ ստեղծող մետաղական շրջափուլի ավարտուն փուլ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության արդյունքում ստացվել են գիտագործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- մշակվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության ձեռնարկությունների կայուն զարգացումը բնութագրող համալիր ցուցանիշ՝ կայուն զարգացման ինտեգրալ ինդիկատոր,
- հիմնավորվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները պղնձի արտադրության շեշտադրությամբ, իրականացվել է էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով պղնձի արտադրության ծրագրի (մետաղների համալիր կորզմամբ) տնտեսական գնահատում, հաշվարկվել է ծրագրի մակրոտնտեսական պոտենցիալ ազդեցությունը,
- առաջարկվել է ՀՀ-ում պղնձի արտադրության կազմակերպման հիմնական էկոլոգիատնտեսական խոչընդոտներից մեկի՝ ծծմբի իրացման մարքեթինգային լոգիստիկ խնդրի իրատեսական լուծում,
- հիմնավորվել է ՀՀ-ում մաքուր մետաղի և դրանից պատրաստվող արտադրատեսակների արտադրության խթանման նպատակով ավելացված արժեքի հարկի գործող հարկային արտոնության սահմանափակման նպատակահարմարությունը և առաջարկվել է ԱԱՀ-ի բարելավման փուլային ուղի:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, ձևակերպվել են հետազոտության գիտական արդյունքները և նորույթները, դրանց տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև դրանց փորձարկումն ու հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ «ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնահարցերը և ժամանակակից միտումները» վերտառությամբ գլխում ներկայացվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման անհրաժեշտությունն ու էությունը, բաղադրիչները, ձևերը, ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման տնտեսական բաղադրիչը, ոլորտի գլոբալ և մակրոտնտեսական դերն ու նշանակությունը, զարգացման հիմնական միտումները, ինչպես նաև ներկայացվել է մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման սոցիալական բաղադրիչը:

Ատենախոսության երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման առկա իրավիճակի ուսումնասիրություն» գլխում հեղինակի կողմից վերլուծվել են մետալուրգիական արդյունաբերության մոլիբդենի, ոսկու և ներկրվող հումքի վրա զարգացող, ինչպես նաև պղնձի ոլորտները, ներկայացվել են կայուն զարգացման ինդիկատորները և մշակվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության ձեռնարկությունների կայունությունը գնահատող ինտեգրալ ինդիկատոր:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման հիմնական ուղիները» գլխում հեղինակի կողմից մշակվել է Հայաստանի Հանրապետությունում մետալուրգիական վերջնարտադրանքների արտադրությունը խթանող հարկային մեխանիզմի բարելավման փուլային ուղի, ինչպես նաև դիտարկվել են մետալուրգիական նորագույն և ապագայական տեխնոլոգիաների կիրառման ուղղությունները ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման գործընթացում:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Աշխատանքի որոշ թվային տվյալներ հին են, մասնավորապես, առավել նպատակահարմար կլիներ, որ աշխատանքի 1.2.2. ենթագլխում ներկայացված տվյալները ավելի արդիական լինեին, առավել ևս որ դրանք առկա են ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական հրապարակումներում, ինչպես նաև ամփոփված և հրապարակված են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից (հարկերի մասով): Ատենախոսությունում գլոբալ և ՀՀ մետալուրգիական արդյունաբերության մակրոտնտեսական դերի ու նշանակության արդի զարգացումները բնութագրող հիմնական տնտեսական ցուցանիշների վերլուծության համար նպատակահարմար է օգտագործել ոչ միայն մինչև 2020-2021 թթ ոլորտային պաշտոնական տվյալները, այլև դրանից հետո պաշտոնական հրապապակումներում առկա և թեմային վերաբերող վերջին տարվա տեղեկությունները ևս, քանի որ վերջին 1-2 տարում ՀՀ-ում և տարածաշրջանում ընթացող ռազմա-քաղաքական իրավիճակը

մեծապես ազդել է հատկապես տվյալ ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա: Որպես տեղեկատվական հիմք կարելի է օգտագործել 2022 «Հայաստանի վիճակագրական տարեգիրքը»: Բացի այդ, մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունների հիմնական օրինաչափությունները բացահայտելու համար հեղինակը կարող էր օգտվել ավելի երկար ժամանակագրական շարքերից, առավել ևս որ այդպիսի տվյալներ նույնպես առկա են պաշտոնական վիճակագրական հրապարակումներում: Այսպես, օրինակ, աղյուսակներ 1.2.3. 1.2.4. 1.2.5.-ը և ածանցյալ աղյուսակները, գծապատկեր 1.2.6.-ը կազմված են երկու կամ մի տարվա համար, ինչը համեմատության և օրինաչափությունների բացահայտման հիմնավորում չէ: Նշենք նաև, որ այս ենթագլխի եզրափակիչ մասում չկա հեղինակի գնահատականը՝ մետալուրգիական արդյունաբերությունը բնութագրող ցուցանիշների վերլուծությունը այս ոլորտի զարգացման հեռանկարների և մակրոտնտեսական ցուցանիշների փոխառնչությունների տեսանկյունից:

2. Աշխատանքի 2.4.-ում ենթագլխում «2.4 Կայուն զարգացման ինդիկատորները և ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայունության գնահատումը» առաջարկվող բանաձևում «Կանաչ համախառն արտադրանք» կոչվելու համար բացակայում է ապագա սերունդների համար ռեսուրսների պահպանության անհրաժեշտությունը բնութագրող ցուցանիշը (համապատասխան բաղադրիչը)՝ ապագա սերունդների իրավահավասարությունը և պահանջմունքները բավարարելու կայուն զարգացման պարադիգմում մնալու համար: Կայուն զարգացման տեսակետների զարգացման համայնապատկերը ներկայացնելիս հեղինակը նշում է ապագա սերունդների շահերի կարևորության մասին ևս, սակայն իր կողմից առաջարկվող բանաձևը չի պարունակում այդ տարրը: Նշենք նաև, որ սոցիալական բնույթի ծախսերը (դրանք ներառված են բանաձևում) հիմնականում կատարվում են արդյունաբերող ընկերությունների կողմից ազդակիր համայնքների բնակիչներին վճարվող որոշակի հատուցումների տեսքով, սակայն ապագա սերունդների շահերի տեսանկյունից այդպիսի ծախսերը «չեն աշխատում»:

3. Եթե հեղինակը արձանագրում է, որ կայուն զարգացման ցուցիչները (ինդիկատորները) չեն մտնում ազգային հաշիվների համակարգի մեջ (ենթագլուխ 2.4., վերջին պարբերություն), ապա ցանկալի կլիներ, որ հեղինակն առաջարկեր այդպիսի ցուցիչների հաշվառման որոշակի մեթոդական մոտեցումներ, օրինակ ինչպե՞ս պետք է դրանք հաշվի առնվեն ազգային հաշիվների համակարգում, ո՞ր հաշիվներում և ի՞նչ մեթոդաբանությամբ:

4. Ատենախոսության 3.2. ենթահարցի շրջանակներում հեղինակը պնդում է, որ. «Վերոնշյալ հանգամանքը ցույց է տալիս այն մտահոգիչ փաստը, որ Հայաստանը դեռևս չի օգտագործում ոլորտի իր համեմատական և բացարձակ առավելությունները միջազգային շուկայում, չնայած տիրապետում է հումքային տնտեսական անհրաժեշտ ներուժի»՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, որ Հայաստանը տարածաշրջանում պղնձի պաշարներով (1%) և արտադրվող ու արտահանվող ծավալներով ամենահարուստ երկիրն է: Հեղինակի վերոնշյալ պնդումը տեղին չէ, քանի որ չկան դրա հիմնավորման ապացույցներ, հաշվարկներ, իսկ որոշակի ապրանքային շուկայում

համեմատական և բացարձակ առավելությունները դժվար չէ հաշվարկել համապատասխան ապրանքատեսակների (ըստ ԱՏԳ դասակարգման) փոխադարձ առևտրի (արտահանման և ներմուծման) ցուցանիշների հիման վրա, ինչը բացակայում է աշխատանքում:

5. Ատենախոսության հեղինակի բացթողումներից է նաև այն, որ հետազոտություն իրականացնելիս չեն դիտարկվել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգը և ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման (մինչև 2035 թվականը) ռազմավարությունը, որոնք հաստատված են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով (հայեցակարգը՝ 2017թ.-ին, իսկ ռազմավարությունը՝ 2023թ.-ին) և համարվում են ոլորտի զարգացման հիմնական ուղենիշային փաստաթղթերը:

6. Աշխատանքում առկա են նաև տեխնիկական բնույթի թերություններ, տառասխալներ, մտքի ձևակերպման սխալներ: Ատենախոսության որոշ ենթագլուխների վերնագրեր, մեր կարծիքով, անհաջող են ձևակերպված, մասնավորապես. ատենախոսության 1.2.2. ենթագլուխը «ՀՀ մետալուրգիական արդյունաբերության մակրոտնտեսական դերն ու նշանակությունը, հիմնական տնտեսական ցուցանիշների վերլուծությունը» ավելի նպատակահարմար կլիներ վերնագրել «ՀՀ մետալուրգիական արդյունաբերության ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշների վրա», ատենախոսության «3.2 ՀՀ մետալուրգիական արդյունաբերության հենքով տնտեսության ճյուղերի կայուն զարգացումը որպես ոլորտի կայունության բարձրացման ուղի» ենթագլխի վերնագիրը ևս, մեր կարծիքով, անհաջող է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սասուն Մյասնիկի Բախշյանի «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն, որը ներառում է որոշակի առաջարկություններ՝ ուղղված ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավմանը և ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման ուղիների բացահայտմանը:

Իրականացված հետազոտությունների արդյունքում առաջարկված տեսամեթոդական մոտեցումներն ու որպես գիտական նորույթ ներկայացված դրույթները կարող են նպաստել կայուն զարգացման տեսության համատեքստում մետալուրգիական արդյունաբերության դիտարկվող հիմնախնդիրների մշակվածության բարձրացմանը, իսկ այդ հիմնախնդիրների լուծման համար առաջարկված մոտեցումներն ու ուղիները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների, մետալուրգիական ընկերությունների կողմից՝ ոլորտի տնտեսաէկոլոգիական երկարաժամկետ կայուն զարգացումն ապահովելու նպատակով:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 11 (տասնմեկ) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Սասուն Մյասնիկի Բախշյանի «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 11 (տասնմեկ) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ–ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը՝ խորհրդում բարեհաջող պաշտպանության դեպքում արժանի է Ը.00.02. – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (19.12.2023թ., արձանագրություն թիվ 13):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կ.Ներսիսյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Է.Մաթևոսյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կ.Ներսիսյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Է.Մաթևոսյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, **Ե.Ա.Հակոբյան**

«19» դեկտեմբերի, 2023թ.

Կ. Տ.